


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԵՆ, ՍՈՒ  
ՏԵՐԻՆ, ԱՐՇԱՆՈՅԱ ՄԱՐԿԻ  
ԳԱԶԻՐԷ (ՊՈՍՏ ԷՆՏՐԱՆԻՐ)

E. TOROSSIAN  
Direct.-propriet. du journal arménien  
ARCHELOUICE  
LE CAIRE (Égypte)

Poste-restaurant



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԻԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՇԱՐԱՔ	
Տարեկան, ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՒԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ծրանք	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԵԿ Է  
ԵՒ ԲՆՈՒՄԱՐԻ ՄԱՐԶԸ  
ԽԱՐԱԳՐՈՒՔԻՄԱՆ ՎՐԱՅ:  
ԽԱՐԱԳՐՈՒՔԻՄԱՆ ՈՒՂՂՈՒԿԱԾ  
ԳՐՈՒՔԻՆԷ ԵՑ ՀԻՃ ՏՐՈՒԻՐԻ:  
ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ Վճարելի են

### ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հարաւային Ափրիկէի Հասարակագիտութեան և Օրանժի ազատ Պետութեան Նախագահներուն՝ Գրիկէրի և Սթէյնի կողմէ, խաղաղութիւնը վերահաստատելու նպատակաւ, հետեւեալ հեռագիրը ուղղուած է Թագուհւոյն կառավարութեան .

«Հազարաւոր մարդկանց արիւնը և դիակները՝ որոնք այս պատերազմին զոհերն են. բոլոր աւերուածներն՝ որք քարոյսպէս և տնտեսականապէս կ'սպառնան Հարաւային Ափրիկէի երկու պատերազմողներուն համար հարկաւոր կը դարձնեն իրարու հարցնելու թէ ինչու կը պատերազմեն .»

«Ասոր համար հաշուի առնելով Անգլիոյ Խորհրդարանին շատ մը անգամոց յայտարարութիւնները թէ՛ պատերազմը սկսած է և կը շարունակուի նորին Վեհափառութեան կշիռնութիւնը վերահաստատելու համար Հարաւային Ափրիկէի մէջ, որ անկախ հռչակուած էր Թագուհւոյն կառավարութեան, մենք մեզի պարտականութիւն կը սեպենք հանդիսաւորապէս յայտարարելու թէ՛ այս պատերազմը միմիայն սկսուած է իբր պաշտպանողական միջոց Հարաւ-Ափրիկէի ազատ Հասարակագիտութեան և յառաջ կը տարուի պաշտպանելու համար երկու Հասարակագիտութեանց անվիճելի անկախութիւնը, իբր միջազգային անկախ պետութիւն. և միանգամայն երաշխաւորելու համար կեանքի և ինչքի ապահովութիւնը Ն. Վեհափառութեան հպատակաց համար, որոնք մեզ հետ միասին մասնակցած են ձեզի դէմ մղուած պատերազմներուն .»

«Այս պայմաններով, քայքայ միմիայն այս պայմաններով, ինչպէս անցեալի մէջ, նոյնպէս հիմա փափաքող ենք խաղաղութիւնը վերահաստատուած տեսնելու Հարաւ-Ափրիկէի մէջ. Բայց սակայն եթէ Ն. Վեհափառութեան կառավարութիւնը բացարձակապէս որոշած է շնչել երկու Հասարակագիտութեանց անկախութիւնը՝ մեզի և մեր ժողովրդեան կը մնայ միայն յարատեւել մինչև վերջը մեր ձեռնարկին մէջ, Բրիտանական ամենահզօր պետութեան դէմ, յուսալից այն Աստուծոյ վրայ, որ մեր նախահարց

սիրտը վառեց ազատութեան անշէջ սիրով, չ'պիտի մոռնայ զմեզ՝ և պիտի կատարէ իր գործը մեր և մեր ապագայ սերունդին շրջաններուն մէջ .»

Մենք վարանեցանք աւելի կանուխ այս յայտարարութիւնները ընելու Ձեր Բարձրագատուութեան, մտածելով թէ յաղթութիւնը մեր կողմն ըլլալով և մեր բանակները Ն. Վեհափառութեան գաղթականութեանց մէջ տեղեր գրաւած ըլլալով՝ նմանօրինակ յայտարարութիւն մը Անգլիական ազգին արժանապատուութեան զգացումները վիրաւորած պիտի ըլլար. բայց հիմակ որ Բրիտանական կայսրութեան prestigeը վերահաստատուած կրնայ նկատուիլ մեր բանակներէն միոյն դերի բռնուելովը, և անոր հետեւեալով գրաւուած երկիրներուն պարսկութիւնը, Ուստի երկարօրէն ալ չենք վարանիր Ձեր կառավարութեան և ժողովրդեան իմաց տալու՝ քաղաքակրթութեալ աշխարհին առջև, մեր պատրաստականութիւնը վերոյիշեալ պայմաններով խնդրութիւնը վերահաստատելու համար .»

#### ՍԱԼՉՈՒՐԻԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Արտ. Գործ. Նախարարութիւն. 11 Մարտ 1900

«Պատիւը ունեցայ ընդունելու Ձեր Բարձրագատուութեանց Պրովոքսթայնէն ուղղած 3 Մարտ թուակիր հեռագիրը, որուն նպատակն էր հասկնալ մեր կառավարութեան դիտարարութիւնը թէ՛ կը ճանչնայ Հարաւ-Ափրիկէի Հասարակագիտութեան և Օրանժի ազատ Պետութեան անվիճելի անկախութիւնը և իրենց միջազգային անկախ պետութիւն ըլլանին, ու հրաւեր մը ուղղուած ձեզմէ, պատերազմը վերջացնելու համար .»

«Անցեալ հոկտեմբերի վերջերը երբ խաղաղութիւնը կը տիրէր Ն. Վեհափառութեան կառավարութեանը և երկու հասարակագիտութեանց միջև եղած պայմանագրութեանց տեսչութեան շուկ, վիճաբանութիւն մը բացուեցաւ՝ որ քանի մը ամիս տեւեց Ն. Վեհափառութեան կառավարութեան և Հարաւ-Ափրիկէի Հասարակագիտութեանց մէջտեղ, որուն նպատակն էր հատուցում պահանջել Հարաւ-Ափրիկէի մէջ Անգլիացի հպատակաց կրած քանի մը շատ կարեւոր վնասներուն .»

«Այս բանագնացութեանց ընթացքին

մէջ Հարաւ-Ափրիկէի Հասարակագիտութիւնը Վեհ. Թագուհւոյն կառավարութեան քթին տակ շատ մը կարեւոր սպառնալիքներ ըրաւ, որով մեր կառավարութիւնն ալ միջոցներ ձեռք առաւ Բէյրի և Սաթալի բանակները զօրացնելու .»

«Մինչև այն ատենը Բրիտանական կառավարութեան կողմէ պայմանագրութիւններէ երաշխաւորեալ իրաւանց փաստ մը չ'գործուեցաւ .»

«Քանկարծօրէն Հարաւ-Ափրիկէի Հասարակագիտութիւնը երկու օրուան պայմանաժամով նախատալից վերջնագիր մը դրկելով պատերազմ հրատարակեց Ն. Վեհափառութեան դէմ և Օրանժի ազատ Պետութիւնը, որուն հետ երբէք վէճի աքարկայ մը չունէինք՝ միևնոյն ճամբան բռնեց .»

«Անմիջական կերպով նորին Վեհափառութեան ստացուածքները գրաւութեան երկու Հասարակագիտութեանց կողմէ .»

«Անգլիական սահմանազուլներէն ներս երկու քաղաքներ պաշարուեցան, երկու գաղթականութեանց մեծագոյն մասը գրաւուեցաւ անձի և ստացուածքի միջկորուստներով .»

«Երկու Հասարակագիտութիւնները ասով հաստատեցին իրենց դիտարարութիւնները և թագուն նպատակները՝ այնպէս վարուելով Ն. Վեհափառութեան ստացուածոց հետ՝ որպէս թէ իրենց երկրին մասը կազմող հող մը ըլլար .»

«Այդ զինուորական գործողութիւններէն առաջ, Հարաւ-Ափրիկէի Հասարակագիտութիւնը մեծաքանակ ազդամթերք կուտակած էր և ահագին սպառազինութիւններ ըրած էր, որոնք միայն Բրիտանական կառավարութեան դէմ գործածուելու համար էին, թէպէտև Ձեր Մեծապատուութիւնները ժխտական յայտարարութիւններ ըրին այդ պատրաստութեանց նպատակին համար .»

«Հարկաւոր չեմ համարիր վիճաբանիլ Ձեր առաջ բերած խնդրոց վրայ, բայց սա միայն յայտնի է թէ՛ ձեր ամենագաղտնի կերպով ըրած պատրաստութեանց արդիւնքը սա եղաւ որ Բրիտանական կայսրութիւնը պարտաւորուեցաւ իչ ստացուածքները պաշտպանելու համար մեծածախսապատերազմի մը սկսիլ և հնգարաւոր թանկագին կեանքեր զոհել .»

ԱՐՇԱԼՈՅՍ

«Այս մեծ աղէտը Բրիտանիոյ իբր պատիժ կրնայ սեպուիլ, այս վերջին տարիներուն մէջ երկու Հասարակապետութեանց գոյութեան հաւանած ըլլալուն համար .»

«Եւ նկատելով Ձեր երկու Հասարակապետութեանց իրենց շնորհուած դիրքը չարաչար գործածելը ու իրենց անտեղի յարձակման յառաջ բերած աղէտները ն. վեհափառութեան ստացուածոց վրայ, թագուհոյն կառավարութիւնը կը պատասխանէ թէ չ'կրնար ընդունիլ Հարա-Ափրիկէի Հասարակապետութեան և Օրանտի Ազատ Պետութեան անկախութիւնը .»

Թ Ղ Ք Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Առաջնորդի ընտրութիւնը. հոգաբարձու պէջին հրահարուելը եւ Յակոբ Եպիսկոպոսին մեկնումը:

... Խմբագիր.

Ո՛չ գրելու մարմնը եւ ոչ ալ ինքզինքս յրազուրկեան թղթակից մը համարելու յաւակնութիւնը ունիմ, այլ որչափ ալ անզօր ըլլայ գրիչս, կը փափաքիմ անոր միջոցաւ օրուան ինքզինքունս վրայ, կարելի եղածին չափ ունեցած տեղեկութիւններս հաղորդել Պատ. Թերթիդ: Պէտք է խոստովանիմ թէ՛ այն ուժը եւ համարձակութիւնը որ կ'զգամ յիս, ուրիշ բանէ չ'ծնիր, բայց եթէ տեսնելով որ օգտաշատ Թերթիդ հետզհետէ իւր փրկարար ազդեցութիւնը կը տարածէ ազգային գործոց վրայ եւ թերեւս պիտի հասնի օր մը որ անոր անաչառ հարուածներուն տակ, ամեն բան իր տեղը գտնէ եւ մենք ալ պարծենալու պատճառ մը տեսնանք թէ՛ հոս ալ հայութիւն մը կայ եւ գործել գիտէ:

Երկար ատեն նամակիս պատշաճ վերնագիր մը գտնելու համար յոգնեցայ. «Ազգային ինքզինքներ» վերնագրով սկսել ուղեցի, չեղաւ: «Արշալոյսի յաղթանակները» վերնագրով ուղեցի, զգուշացայ, նկատելով որ այս բանով մեր հիմնականները պիտի վերաւորեմ «Տոհմային նիւթը» գրելով սկսիմ ըսի, չ'յարմարեցաւ: «Այվազութիւն» բայց նոր բաներ չէին ասոնք, քանի որ Անկիւ-Պօէր պատերազմը կայ, այժմէութիւնը ուրիշ բանի վերադարձը քիչ մը անհեթեթ պիտի ըլլար, մանաւանդ որ այսպիսի խոսք վերնագիր մը իր ետեւէն ընդարձակ խորհրդածութիւններու զուռ մը պիտի բանար իմ առջեւ, ուրիշ ներս մտնել չպիտի կարողանայի. ուստի հրատարակելով իմ միտքս պաշարող այդ բազմաթիւ վերնագրականներէն, ամենապարզ ձեւի մը տակ իմ կցկտուր լուրերս կը հաղորդեմ Ձեզ, որոնք դարձեալ եթէ իրարու քով կանոնաւորապէս շարել կարենամ՝ ընթերցողները Այվազութիւնէ պիտի բանն, որով ես ալ վերնագիր մը ստեղծելու դժուարութիւններէն անվրտանդ ազատած պիտի ըլլամ:

Ո՛չ X ի ճառագայթներուն, ո՛չ Ռէօթ կէնտան շոյսերուն եւ ոչ ալ գիտնական Էտիւքնի նորահնար երկքտրականութեանց պէտքը կայ հաստատելու համար թէ՛ երկու երեք տարիներէ ի վեր մեր Երեսփոխան ժողովին մէջ մտքերը զբաղեցնող է՛ն կարեւոր ինքզինքն էր Եպիսկոպոսի Առաջնորդ տեսնել Յովսէփ Եպիսկ. Այվազեանը:

Այս վեղարակիրը՝ դեռ Եպիսկոպոսական փայլուն մատանին իր մատը չ'անցուցած իսկ, մեր երեսփոխաններուն աչքը խածած էր հարկ չ'կայ ըսելու թէ մոզական գաւազանի մը ազդեցութիւնը կար գործին մէջ . . .

Փաշան ըսած էր հասկցունել կուզեմ: Ուրեմն տարօրինակ չ'պիտի ըլլայ, երբ ըսեմ թէ՛ մեր վարչութեան մէջ ծնունդ առած այս գաղափարը իրականութեան վերածելու համար երիցս առաջնորդական ընտրութիւններ կատարուեցան եւ երիցս Եպիսկոպոսի թեմին առաջնորդական ակտիւ թափուր մնաց . . .

Յակոբ Եպիսկոպոսի մէկ երկու համախոհ

ները սպասեցին որ անոր ընտրութիւնը յաջողի. անօգուտ սակայն . . . խեղճ մարդը սպասելէ յուսահատած անցեալ շարժու Աղէքսանդրիայէն մեկնեցաւ դէպ յ'Իզմիր . . . երթա՛յ բարով. շատ անօգուտ մէկն էր:

Իզմիրեանի համակիրները եւ անոր ի նպաստ հանրագիր ստորագրողները դեռ կ'սպասեն որ իրենց պատասխան տրուի . . .

Եղիշէ Եպիսկոպոս Արմաշի մէջ ունեցած հանգստութիւնը վրդովել չուզեց եւ շիտակն ալ այն էր:

Վերջապէս անցեալ ուրբաթ օր 3)16 Մարտ վարչութեան Երեսփ. ժողովը գումարուեցաւ:

Օրակարգ ունենալով

- 1. Առաջնորդական ընտրութիւնը.
2. Այվազեան Եպիսկոպոսին, Ա.մ.ն. Իզմիր-լեանի գանձապետութեան ղեկ ի . . .

Ըսել է հիմակ իմ առ ձեզ գրելու շարժանիքս բացատրած է եւ խոսքը վերնագիր մը ստեղծելու համար կրած նեղութիւններուն վերջակէտը կը գնեմ, այս քանի մը տողերով իմ նպատակս Ձեզ բացատրել կարենալուս պահանջաւ:

Այժմ մեր Եպիսկոպոսի հայրոց Առաջնորդն է Այվազեան Եպիսկոպոս, որ շատ ազգասէր է ըսուած էր արդէն, . . . առանց մանրամասնութեանց մէջ մտնելու:

Այվազեան Եպիսկոպոսի մասին այժմէն բան մը չ'պիտի գրեմ Ձեզ լուսագրիս կը համարեմ որ ինք գայ եւ իր արժանիքը ցոյց տայ Եպիսկոպոսի ժողովրդեան, որոնք ինչպէս կը տեսնեմ, շատ զբոսարահած են, այն ատեն մենք ալ եթէ գովեստի արժանի գտնուենք իր վարժանքը՝ կը գովենք բնական է. իսկ եթէ հակառակը՝ մենք ալ անոր համեմատ կը վարժենք իրեն հետ:

Ուրիշ լուր մը եւս, որ ոչ նուազ կարեւոր է Առաջնորդի ընտրութեան, բայց հաւատարմիդ չպիտի գայ:

«Վարժարանի հոգաբարձուն» որ իր պաշտօնին ու դիրքին բերումը 2--3 տարիներէ ի վեր Եպիսկոպոսայտի հոգեւր կը բարդէր, կը լսենք թէ՛ ուր ուրեմն իրեն հաճելի՛ երեւցած այդ պաշտօնը թողած է աւելի արժանավորներ իր տեղը գրաւելու համար:

Ժողովականները դեռ նոր համոզուած են եւ զեր թէ՛ հոգաբարձուն վարժարանի համար ծախսած գումարներուն համապատասխանող արդիւնք ձեռք չ'բերեր: Ա՛յ չենք գիտեր թէ մինչեւ ցարդ յուսկէտս եղած ծախքերուն կատասխանատուն ո՛վ պիտի ըլլայ, քանի որ կ'ընդունին թէ արդիւնք մը առաջ եկած չէ:

Բայց ինչ որ է, գոնէ այդչափ գիտնալ եւ խնայողութիւն ալ պիտի քաջութիւն մը չէ:

Մտահոգութիւնը տիրել սկսած է վարժարանի պաշտօնէից ուսանց մէջ, որովհետեւ ինչպէս գիտե՞ք, հոգաբարձու պէյը ասոնցմէ շատերը ո՛չ թէ իրենց արժանիքին ալ ապրելու միջոցը դուրսնելու համար պաշտօնի կոչած էր:

Մեծ յոյս կայ թէ վարժարանը հետզհետէ կարգի պիտի մտնէ, մեծ արգելքին հրատարակուն պատճառաւ, եթէ Բաղաք. ժողովը սակայն, փոյթ ունենայ նոր ընտրելի հոգաբարձուները այսպիսի անձնաւորութիւններէ զատել, որոնք օժտուած ըլլան շատ մը արժանիքներու հետ ձեռնհասութեան ազաւելութեամբ, մանաւանդ վարժարանը նախանձելի վիճակի մը մէջ գնելու ազնիւ համոզումներով:

Կը մտածէի քանի մը ընտրելիներ ներկայացրելու այս պաշտօնին համար սակայն աւելի յարմար է թր ճողոջներն իրենց արժան գատած անձները գրաւորապէս ներկայացնեն Առաջնորդարանին եւ այսպէս կատարուի նոր հոգաբարձուաց ընտրութիւնը:

Ընկերութիւններու հեղեղ մ'է կը քալէ Գահրէի սալայատակներուն վրայ: Անցեալ օր քանի մը հոգիներ ալ խորհուրդ կ'ընէին կազմել ընկերութիւն մը՝ որ արդէն կազմուածներն քակելու պաշտօն ունենայ: Ի՞նչպէս կը գտնէք աչա գաղափարը, յառաջդիմական չէ՞:

Մնակ եւայլն: ՀԵՐՄԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂԱ. — Լոնտոնի Խորհրդարանականներուն մէջ լուր կը շրջի թէ՛ կառավարութիւնը որոշած է Զօրավար Գրօնթը Սէնդ Հէլէն կղզին զրկել: Կը յաւելուն նաև թէ՛ դահլիճը առ այժմ գերիներու վիճակին վրայ ու է փոփոխութիւն չ'պիտի առաջարկէ և ոչ ալ պիտի ընդունի այս մասին եղած առաջարկները:

Տէյլի Նիլզի Խորհրդարանական թղթակիցը իւր կողմէն կըսէ թէ՛ զօրավար Գրօնթի Սէնդ Հէլէն փոխադրուելը որոշուած է՝ և ուր պիտի մնայ մինչև պատերազմին վերջանալը: Այս մասին արդէն պէտք եղած հրամանները արձակուած են առ որ անկէ է:

ՓՕՐԹՈՒԿԱ. — Գերմանական լրագիրները կը հաղորդեն թէ՛ Փորթուկալի կառավարութիւնը հետ գիրներու գրաքննութիւնը վճռած է այս անգամ աւելի խիստ, քան ինչ որ էր ասկէ առաջ:

Գերմանական Գեսպանատունը այժմ կղզաղի անցեալ օրեր վար դրուած հետագրի մը խնդրով, յորում Տէլակուա Պէյ օժանդակ նաւեր զրկուելու պարհանակութիւնը կը գտնուէր և կարելի է ասոր հետեւանքն էր կառավարութեան կողմէ արուած խիստ որոշուած հետագրաւորներուն նկատմամբ:

ՊԵԼՃԻԳԱ. — Կ. Պօլսոյ կալթա Սէյայի իրաւաբանական վարժարանէն վկայեալ ՏԻՄՄ ՄԻՀԻՄԱՆ ԹԵԼԵՄԱՆ որ Ա.մ.ն. Իզմիր-լեան Սրբազանի Պատրիարքութեան օրով օտար թղթակցութեանց դիւանին մէջ շատ կարեւոր դիրք մը գրաւած էր, այս անգամ վաշտուն քննութեամբ մը յաջողած է Պրուքսելի իրաւաբանական համալսարանին «Տօք. Թօրիայի» շրջանակին մէջ ընդհանուրի:

Մեր երիտասարդ ազգակցին և մասնաւանդ ազնիւ բարեկամին այս առթիւ մեր շնորհակցին շնորհաւորութիւններն զրկել կը փութանք:

ԹՈՒՐԿԻԱ. — Նիւ Եօքթի նշանաւոր Հայերէն մէկը Քարաբոզէն նամակ մը գտաւցած է. ոչ ոքն մէջ կը գրեն թէ՛ Խաբաբը գի, Տիարպէ, Երիւր և Պիթիւր հայերը մեծ սակուածի մէջ են, ոգովհետեւ թուրքերը կը գրգռեն վայրենի քիւրաքը, որ ուրիշ ընդհանուր շարք մը տան հայերուն, որը շատ աւելի արիւնալից և վարճուելի պիտի ըլլայ քան 1895ին:

Թուրքերը հրապարակաւ փողոցներուն և շուկաներուն մէջ սպանալիքներ կ'ընեն եւ զեր թէ՛ այս անգամ ամբողջ հայ ցեղը պիտի ջնջեն և թէ Եւրոպական պետութիւնները չ'պիտի կրնան միջամտել այս շարքերուն ատեն՝ Բաղմաթիւ հարուստ հայեր կը պատրաստուին երկրէն հեռանալ:

ՆԻԻ ԵՕՐԳ ԶԸՐՆԸԼ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Եղիստընթ Միրանշահեան. Այրի Տիկին Մարիյա Միրանշահեան և Այրի Տիկին Լէպիպէ Ժօրթա՛ Տիար Նյան Մալումեան. Տիար Արմենակ Մալումեան, Տիար

և Տիկին Միքայէլ Նշանեան. Տիար Գրիս-տոպիան Թէվէթլեան, Տիար Մկրտիչ և Սեդրաք Թէվէթլեան. Տիար և Տիկին Մինաս Գոգիկեան՝ կը փութան իրենց շնորհակալիքը յայտնել բոլոր ազգականաց և բարեկամաց՝ որոնք փութացած էին ներկայ գտնուիլ:

**ՏԱՐ ՄԻՆԱՍ ՄԻՐԱՆՇԱՆԵԱՆԻ**

յուզարկաւորութեան տխուր հանդիսին և իրենց ցաւակցական զգացումներն յայտնել, երիտասարդ հանգուցելովն սղակիրներուն:

**ՈՐԲԱՆԱՄ ԸՆԿ. ԱԿՆՑԻ ԱԶԳԱՅՆՈՑ**

... Տնօրէն «Արշալոյս» լրագրոյ

Ներկայիս կը խնդրենք որ բարեհաճիք Ձեր օգտաշատ թերթի միջոցաւ յայտարարել հետեւեալն.

Նկատելով Ակն քաղաքի բազմաթիւ թշուառ որոց ողորմելի դրութիւնը, սրբազան պարտականութիւն մը կատարելու միակ սկզբունքով, ներկայ 1900 Յեռնոյ 1 թիւականէն մկնեալ Ոլթա-խնամ ընկերութիւն մը կազմակերպած էր ինչպէս եւ Ընդէ, ժողովոյ քուէարկութեամբ առժամայ Գործ. ժողով մը ընտրուած ենք եթէն անդամներէ բաղկացեալ որք գործի ձեռնարկած են ընդ հրահրութեամբ Մեծ. Տիար Սեդրաք Գաւթեանի:

Ուստի կ'ուզանք կողմով ընել ազնիւ ազգայնոց, որ բարեհաճին իրենց օժանդակութիւնը եւ բարոյական աջակցութիւնը չ'խնայել, սոյն նորակազմ ընկերութեան, 'ի սէր բազմաթիւ անոք բերելու:

Ի դիմաց արժ. Գործադիր ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Ա. ԷՍԻԻՃԵԱՆ Ս. Գ. ՓԱՓՍՉԵԱՆ Գահիրէ, 20/3/900

**ԲԱԶՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ**

Ըստ խնդրանաց Տէր Գ. Ք. Չէնճիր-ճեանի, յետագայ նամակը որ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին ուղղած է, տեղոյս Իտալական հիւպատոսարանին միջոցաւ նոյնու-թեամբ կը հրատարակենք:

Վեհեղ Սրբազան Հայր

Պատրիարք Կ. Պոլսոյ ու Նախագահ Ազգ. Կեդր. վարչութեան Բաղ. ժողովոյ:

Ի Կ. Պոլսոյ Գում.—Փաքու

Ձերդ Ամեն. եւ Պատկ. վարչութեան ուղղեալ 9/24 թիւաւ. եւ 4/16 յունուար գրութիւններս անշուշտ ընդունած էք եւ պարունակու-թեանց վերահասու եղած. ինչպէս ծանուցած էի վեհամիային որոշումներն եւ հրամաններն՝ որն

որ Տիար Սեդրաք Գաւթեանի միջոցաւ 16(28 թիւաւ. Առաջ. Փոք. հօր եւ պաշտօնէից հաղորդուած էր:

Տեղոյս Գահանայք՝ մեր ջանքերի արդիւնքը չը վայելած՝ Գաղաքական ժողովոյ կողմանէ ըն-ջել տուին. երկու նամակներովս ալ ապաշեր էի Ձերդ Ամեն. եւ Պատկ. վարչութեան որպէսզի յանձնարարէք զիս տեղոյս պաշտ. անձնաւորու-թեանց. 3—4 ամիսը անցաւ պատասխան չըստա-նալուս պատճառաւ տեսակ տեսակ անվայելուչ խօսքեր հնարեցին՝ ես ալ ապշած մնացած եմ:

Այժմ յանուն Պատրիարքարանիդ ժողովրդեան մէջ տարաձայնեցին ըսելով թէ «եւ» Սք. եկեղեց-ւոյս չեմ պատկանիր եղեր. եւ թէ եկեղեցւոյ դէմ յանցաւոր լինելով իսպառ մերժած է եղեր զիս՝ Պատրիարքարանդ եւ թէ 820 թիւ 9 Մարտ 96ի տուած շրջաբերականիդ կեղծ, եւ այլն:

Սք. Հայր. ինչպէս ծանուցած էի 4/16 գրու-թեամբս որ՝ անողոք հիւանդութենէ օձիքնիս չա-զատեցինք. մեր այս խօսքը հաստատելու համար ոչ թէ միայն Պատրիարքարանիդ՝ այլ Ռուսներոյ եւ Պուլկարիոյ ճարար քաղաքական բժշկաց վկայութիւններն ալ ունիմ, որոնք կը հաստատեն թէ՛ ես եւ մանկունքս տաք երկրի մէջ առողջու-թիւննիս կրնանք պահել:

Ես լորտ, պաճքեր, կալուածատէր չեմ. աղքատ քահանայ մը՝ հանապազօրեայ հացի կարօտ որ՝ առողջութիւննիս պահուի. եւ այժմ վաղուց կը սպասէի նամակաց պատասխանին եւ անա-նա-կնկալ Առաջնորդարանէն չուր տարածուեցաւ թէ «եւ եւ մակընթաց չեմք պատկանիր Սքոյ եկե-ղեցւոյս եւ թէ իսպառ մերժուած եմք» այս սոս-կալի յայտարարութիւնը իրաւ է թէ ոչ եւ կամ ինչ յանցանց համար վերագրուեցաւ մեզ. կը խնդրեմ Պատկ. վարչութեանէդ որ՝ հաճիք շուտով պատասխանել եւ այդ նամակիս պատասխանը տեղոյս Իտալական դեսպանին հասցէին գրուի, որպէսզի ձեռքս հասնի եմ եւ մնամ

Ձերդ Ամեն. եւ Պակ. վարչութեանդ միշտ Ամենախոնարհ ծառայ ԳԱԲԻԷԼ ԲՆՆ. Բ. ՉԷՆՃԻՐՃԵԱՆ 4/16 Մարտ 1900 Գահիրէ

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԱՆԵՔՅՈՏՆԵՐ ԵՒ ՎԷՊԻԿՆԵՐ Ա. ՄԱՍ ԿԱԶՄՈՒԱԾ Կը վաճառուի ի գին 5 յրշ. ողջ Գիմել առ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ, Հայկական սրճարան: Եւստ թուով գնողներուն 20% զեղլ:

**ԶՈՐԱՎԱՐ ՔՐՈՆԺԻ ՄԱՍԻՆ**

Զօրավար Գրօնթ Պօէր բանակին առաջին զօրավարներէն մին է. սպարապետ Ժիւպէրէն յետոյ՝ Թրանսվալի ամենալա-ղինուորն է: Իր անգլիատեցութիւնը և չա-

փազանց հայրենամոլութիւնը զինք ամենէն ժողովրդական մարդը դարձուցած են երկու Պօէր հասարակապետութեանց մէջ:

Պ. Ա. Քինիր, Լորտ Մէթըլընի յառաջ-խաղացութեան վրայ հրատարակած գրքին մէջ այսպէս կ'ըսէ Պօէր զօրավարին համար:

« Ճարպիկութիւնը և հնարագիտու-թիւնը լինեցուցած մարդ մըն է վախին ինչ ըլլալը չգիտեր. իր ուղեղին մէջ այնչափ հնարքներ ու միջոցներ ունի՝ որ բոլոր Բէշ Մեյի Մօլթիները գրպանէն կը հանէ. իր տեսակին մէջ շինական մըն է. պատերազ-մական խորհուրդներու մէջ վերջին խօսքը իրն է. նոյն իսկ Գրիւկէր նախագահին վրայ ազդեցութիւն ունի:

« Եւստ գործունեայ է. նպատեալովի դաշտին վրայ տեղ մը չ'կրնար կենալ. ամենասոսկայի կրակը՝ իր վրայ ամենազոյն ազդեցութիւն մը իսկ չ'ընէր. չափ սրամիտ է և տնական առաքինութեամբ ու ընտա-նեկան բարութեամբ լեցուն:

« Անգլիական փոքրիկ քաղաքի մը մէջ մօրու բուր մարդու մը տեղ կ'անցնէ. Էկ-զեթը Հօլի մէջ կրնայ կիրակնօրեայ դպրոցի մը դասատու կարծուիլ. տեսքը հաճելի է ու նայուածքը ծանրաբարոյութիւն և մար-դասիրութիւն կ'արտայայտէ:

« Գրիւկէրստօրֆի մէջ Սք. ձէյմանը raid ին պետը իրեն յանձնուեցաւ, ուր Գրօնթ զինքը մուկի նման թակարդի մը մէջ ձգեց ու հարկը հոգի բպաններով, միւսները գերի բռնեց:

« Գրօնթ միջահասակ է, շատ մալրատ, շեշուած դիմագծերով, իր կապոյս վճիտ աչքերը շատ անհաճոյ երեւոյթ մը կ'առնեն երբոր զքեզ աչքին պոչովը դիտէ:

« Չափազանց քաջասիրտ է. ճամարիտ հայրենասէր մը և կատարեայ զինուոր մը ու պետ մը միանգամայն. բուն Վէյթի մարդ մը՝ որու միակ փափաքն է իր հայրենիքին մէջ ապրիլ ու հոն մեռնիլ հրացանը միշտ ուսին վրայ:

« Զօրավար Գրօնթ Բօյէֆիթրու մի մօտ 12,000 ակրան տարածութեամբ ազարակ մը ունի, ուր նահապետական կեանք մը կ'անցնէ, իր զաւակներուն, բնիկ ծառանե-ներուն և ստորակարգեալներուն հետ, որոնք իր մատը չարժեւուն և կամ աչքը խաղցը-նելուն կը հնազանդին իրեն: Չինքը ամե-նէն շատ յատկանշողը իր անգլիացիներուն դէմ ունեցած սին է: Տր. ձէյմանի աւա-զակային արշաւանքին ատենը, բաղարձա-

**ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ**

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՅԻ ԱՍԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇՄԱԿՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ Ի ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա-բաժինները:

Ապահովագրեալներուն արդէն Վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՆ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԵՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գաւթաւորութիւն-ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Ազգ. քառագրիս:

կապէս կուզէր բոլոր արշաւախումբին սպաները հրացանի բռնել և այն ժամանակ միայն իր որոշումէն մէկդի կեցաւ, երբոր իրեն հասկցուցին որ գերի սպաները Թրանսօվաի դատին աւելի օգտակար էին ողջ քան թէ մեռեալ:

« Այսօր որ Ափրիկէի առիծին բռնուիլը գուցէ մտ է, կը ճանչնանք որ ամենավտանգաւոր և ամենաճարտար թշնամիէ մը պիտի ազատենք, որ մեզի արիւն նախից դասեր տուաւ:

« Իր յաղթականը պիտի գիտնայ անշուշտ ա՛յն պարագային գնահատել ա՛յդ մարդուն հանճարը, որ գիտցաւ յուսահատ և անպաշտպանելի դիրք մը, զինուորական տարիգրութեանց մէջ չ'տեսնուած ապաստանի մը վերածել »:

Իրաւ ալ Քրօնթ ճարահատած, դուրսի օգնութենէ ալ յուսակտուր, բանակին մէջի ծագած երկպառակութենէն և արի Պորկըրներուն անօգուտ տեղը մեռնելէն զըրդուած, անպայման կերպով անձնատուր եղաւ:

Բայց ինչ որ ըրաւ, ամբողջ գերմարդկային էր. ամբողջ 9 օր տանապատիկ ամենալաւագին բանակին դէմ դիւցազնաբար կռուեցաւ. իր բանակին մեծագոյն մասը, բոլոր դաշտային խօշոր թնդանօթներով փախցուց և վերջապէս Քուտուզրանտի անելանելի դիրքին մէջ ինկաւ, ուր բոլոր բարձունքներէն անդրիական ահռելի թնդանօթներու կրակէ շրջանակին մէջ, 1 իսճիքի մահառիթ մուխին տակ, գնդակներու և ռումբերու կարկուտին տակ, 7 օրուան հերոսական դիմադրութիւն մը ընելէն յետոյ անպարտելին Քրօնթ անձնատուր եղաւ, պատմութեան տարեգրութեանց մէջ ամենափառաւոր էջ մը ձգելով: Արդէն իր ազկէ աւելի դիմադրելը գիծցազնութիւն մը չ'պիտի ըլլար այլ ոճիր մը:

**ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ**

ԿիրՍՎԻ 18 ՄԱՐՏ 1900

8503	7406	910	9529	9007	2569
9484	609	4390	2080	8783	1889
8240	6124	3017	1479	9329	5083
1832	7946	1988	9040	7783	1304
	767	4371	4741		


**ՀԱՅ ԳԵՐՁԱԿ ՏԻՐԱՆ ՇԻՐՄԻՏԻՋԵԱՆ**

Շարէ Մօհամէտ Ալի Վիգթորիա դեղարանին քով

Այս անգամ նորաձեւութեանց և ճաշակի յարմար իր ըրած նոր ապսպրանքներն հասած ըլլալով, իրեն դիմող յաճախորդաց ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոստանայ խիստ չափաւոր գներով:

Անգամ մը փորձելու համար հոն դիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ամեն անգամ ձեւաւոր հագուստ ունենալու համար դարձեալ հոն պիտի դիմէ:

**Վ. Ա. ՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ**  
**Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՅՅ**  
**ՇԱՐԷ-Ա. ՊՏԻԻԼ-Ա. ՉԻՉ**



Թէյի գործածութեան ընդհանրանալով, թէյի հաշակն ևս նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տոնն, որ արդէն հանրածանօթ է իր քանանայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՄԷՅԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ ինչպէս նաև ձեռմեռան եղանակի յարմար թէյեր որոնք իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժպնութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գաւառացի և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Առդամառիւն Թէյերու ձեւակի, կօրուի և գնոց մասին: 99355

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻԿԻ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

26 — 30

**ՏՕՊՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ**

Ամերիկեան Առամբարոյժ Ապօին Շարէ Գուպի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակռաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուանդրուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4-5:

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ**

Փոօզի Պալ վահագնաւան մօտերը, Կամե-Էլ-Պեկարի հիւսիսային

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ դուրս ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զոլաւ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ դաղդիականք անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ և փութով կը կատարուին: 39-50

**ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ**

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶՏՈՒՆ ԵՒ ԿԱՐԶՏՈՒՆ

Տաններկու տարիներ շարունակ կախեալ լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ ճշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապտիւլա Եղաբարց տան, ինչպէս ևս ուրիշ մի քանի ժամանակ տուններու, քա աքիս մէջ վերջին անգամ էջ թէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, քիմի տանձին գործատեղի մը կը հիմնէ Էգպիէի Շարիա Գամմէլ Օթէլ ՇէֆէրՏՍԻ ճիւղ դիմաց թիւ 3 արարթրմանին երբոր յարկը ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս ևս գիւրք կռուիներ ի հարկին: Ակրանսիսքման բնական մեծութեամբ:

Կենդանապիւրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միկեաքիւր:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր բուռ, սեփեթքման Կէլն:

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք և կապաղելապէս գոհ պիտի մնաք:

ԳԻՐԲ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իստական, Իւրոցական, Գիտական, Գրական, Առուեստական, Բանասիրական, Վիպական եւայլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել գրեթէ յոյսով ճիւղ կ'ունասարգեանի: Գալստեան վարժարան հայոց ի Գահիրէ: